

Համանիշ ձառնէջէս (ցուցանել) եւ ձորփայնսն (այսինքն) բառերուն:

Թէ պիտի կարենայ այսու գոհ ընել նիւթին հմուտները, չենք գիտեր: Այսու համոզեմք՝ ինամբով, ընտիր յօրինուածով գրուած եւ տարիներու աշխատութիւն մին է Գոփո. Հեօլքերի այս գիրքը, ուր դժուարութեան բուն երակներ, բուն կը մերձենայ բանասիրութիւնը, բայց Հեղինակն անձամբ կը խոստովանի թէ տակաւին վերնականը չէ իւր խօսքը, անոր համար, պիտի ըսենք, դժուարութիւն կը մնայ դժուարութիւն Տերունական խօսքերուն եւ Կոլման աղօթքին հին եւ նոր պատճառներն իրարու հետ հաշտեցնելու:

Հ. Ս. ԵՂՅԱՅԵԱՆ



ՍՅՆԻՍԵՐ

“Յիշատակարան, Հայ տպագրութեան 400 ամակի առթիւ: — Գ. Զարդարեանի Հայ տպագրութեան 400 ամակին առթիւ (1512—1912) կազմուելիք գործքը հսկայաբայլ կը յառաջդրուի. նախընթաց 27 պրակներուն յաջորդած է արդէն 28-ը. որ լայն տեսակ մտքուր տպագրութեամբ, Ներկայ պրակներէն է. Յակոբ Վարժապետ Կորինեանց (1863), Յակոբ Պատրիարք Սերոբեան (1780—1862), Նստուածատուր Արքեպ. Բարեկեան (1738—1825), Տիկին Կատարինէ Լազարեանց (1805—1881), Յակոբ Մինաս Աբրահամյան († 1683), Մուսա Խան Բուխլի Պաշի († 1820), Պօղոս Պատրիարք Գրիգորեան:

Անշուշտ Մեծ. Հեղինակին ծրագրին համաձայն, գործքս արդէն աւարտած պիտի ըլլայ, մինչեւ յօրինանի տեսախմբութեան որոշեալ օրը:

Յէշտոյ՝բաւ՝ ստուգիւ պահելիք գործք մը, ուր նկարուած պիտի գտնենք Հայ կեանքն իւր իսկական գոյններով, շարան շարան մեր առջեւ ներկայացնելով պատկերազարդ երեսելի անձնաւորութեանց շարժապատկեր մը (cinématographie), որ սակայն ոչ թէ միայն վայրկենաորակ ազդեցութիւն մը պիտի թողու ընթերցողաց վրայ, այլ միեւնոյն ժամանակ մէջ մէկ մնայուն վաւերաթղթեր ապագայ պատմութեան համար: Հարկ է խոստովանել, որ այսպիսի կարեւոր եւ միաժամանակ տաժանելի գործք մը ի կատար հանելու համար՝ եռանդուն ու անխնդր աշխատողի մը անվճար ջանքերու կը կարօտէր:

տողի մը անվճար ջանքերու կը կարօտէր. եւ ինչպէս էր տեսնուի, Մեծ. Հեղինակն ամեն ճիշդ յանձն առած է, աւելի ճիշդ ու կատարեալ կազմել կարենալու համար իւր հրատարակութիւնը. ամենայն իրաւամբ կրնանք ըսել. “արժանի է մշակն վարձու իւրոյ”:

Գ. Զարդարեանի այս գործքը, թող գործնական օրինակ մը ըլլայ այն ամենուն, որոնք թէ եւ շատ ու մեծամեծ խոստումներ կ'ընեն, սակայն գծախտաբար արտագրութիւնը քիչ կամ ոչինչ կ'ըլլայ ինչպէս որ հասարակօրէն կ'ըսուի. Chi molte cose incomincio, viene a capo di poche: Ինչ գեղեցիկ կ'ըլլար եթէ Հայ տպագրութեան նուիրուելիք բոլոր գործերն ալ այսպիսի ըլլային: Կը յուսանք թէ “Յիշատակարան”, դրդիչ պիտի ըլլայ 400 ամակին առթիւ կազմուելիք գէթ գրական “Փնդի” մը գաղափարին եւ թէ ինչ լաւագոյն նպատակի կրնայ գործածուիլ այս “Փնդի”, Ազգին անցեալը եւ դարէ ի դար հայութեան ոգին, անոր լեզուին մշտնջենաւորութիւնը, սովորութեանց պահպանումը, գեղարուեստական գիտութեանց յառաջացումը, գրական յիշատակարանով մը յաւերժացնել, ահա գործնական առաջարկութիւն մը, որ՝ կը համարենք, թէ կ'արժանանայ Հայ գրագետներու եւ Մեկնեսաւներու ուշագրութեան:

Հ. Յ. ՏԵՂԻՍՊԱՐԿԱՅԵԱՆ



ՍՍՅԵՆԱԳԻՑԱԿԱՆ

Ը Ն Դ Յ Ա Ն Ո Ւ Ր Յ Ա Ն Կ
“ՀՆԻԿԵՍ ԱՄՈՐԵՆԵՆՈՒ ՌԻՈՒՄՆԵԼԹԻՐԻ
25 ՏԱՐԻՆԵՐՈՒՆ
(1887—1911)

ՅԱՆԿ Ա.

Յօդուածագիրներն եւ իրենց յօդուածները:

(Հ—դաս—յ—թիւն)

ՄԱՍՏԻՍԻԱՆ Ե. Դիտողութիւն մը (Յելեքս Նեփի L'Arménie chrétienne մասին). ա 72, է 105:

— Զեհոր Գլան եւ Մ. Խորենացի. դ 4:

— Ղազար Փարպեցու պատմութեան յառաջաբանը. ա 166:

— Քն. Ընկեր իմ: Վիշա. գ 119: